Հարցուպատասխան
Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի 5-րդ ընդհանուր մեկնաբանության վերաբերյալ

Հոդված 19
Անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունք

Երևան, 2023

Այս հարցուպատասխանը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիան, և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Ծրագիրն իրականացվում է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի կողմից՝ ի դեմս Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի:

EUROPEAN UNION FOR ARMENIA

Coalition for Inclusive Legal Reforms

"AGATE"
RIGHTS DEFENSE CENTER FOR WOMEN WITH DISABILITIES

ԴԵՊԻ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
TOWARDS INCLUSIVE ARMENIA

Ո՞րն է 5-րդ ընդհանուր մեկնաբանության նպատակը:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 19-րդ հոդվածը հատուկ անդրադառնում է հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքին: Այս հոդվածը հիմնարար է, քանի որ այն ընդգծում է այն սկզբունքը, որ հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր անձ իրավունք ունի ընտրելու, թե ինչպես ապրել, որտեղ ապրել և ում հետ:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ- ի կոմիտեն մշակել է այս ընդհանուր մեկնաբանությունը՝ ուղղորդելու պետություններին, թե ինչպես պետք է ապահովել անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքը: Այն մանրամասն ներկայացնում է, թե մասնակից պետություններն ինչ պարտավորություններ ունեն՝ ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունենան ինքնավարություն, ընտրություն և աջակցություն՝ իրենց համայնքներում ապրելու համար:

Ի՞նչ համակարգային խնդիրներ կան անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի հետ կապված:

Հաշմանդամություն ունեցող անձինք պատմականորեն զրկված են եղել սեփական կյանքի վերաբերյալ որոշումներ կայացնելուց: Ենթադրվել է, որ շատերն անկարող են անկախ կյանք վարել իրենց իսկ համայնքներում: Աջակցությունը կամ առկա չի եղել, կամ փոխկապակցված է եղել մեծ հաստատությունների հետ, որտեղ հաշմանդամություն ունեցողները մեկուսացած են եղել և զրկված որոշումներ կայացնելու իրավունքից:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն վերջին տասնամյակում որոշ առաջընթաց է նկատել 19-րդ հոդվածի իրականացման ուղղությամբ: Այնուամենայնիվ, Կոմիտեն ընդհանուր մեկնաբանությունում թվարկում է հետևյալ խոչընդոտները.

- գործունակության մերժում՝ կամ ընդունված օրենքների միջոցով, կամ փաստացի՝ նրանց փոխարեն կենցաղային հարցերի մասին որոշումներ կայացնելով,
- անբավարար սոցիալական աջակցության և պաշտպանության միջոցներ՝ համայնքում անկախ կյանքն ապահովելու համար,
- իրավական շրջանակների և անձնական օգնական և անհատականացված աջակցություն ունենալու նպատակով բյուջետային հատկացումների անբավարար ծավալ,

- մարդկանց պահում հաստատություններում, այդ թվում՝ երեխաների նկատմամբ, և հարկադիր բուժում՝ իր բոլոր դրսևորումներով,
- ապաինստիտուցիոնալացման ռազմավարությունների և ծրագրերի բացակայություն և հաստատություններում շարունակվող ներդրումներ,
- բացասական վերաբերմունքային դրսևորումներ, խարան և կարծրատիպեր, որոնք հաշմանդամություն ունեցող անձանց թույլ չեն տալիս ներառվել հասարակությունում և օգտվել հասանելի աջակցությունից,
- հասարակությունում անկախ կյանքի իրավունքի մասին թյուր պատկերացումներ,
- հասանելի, ընդունելի, ֆինանսապես և ֆիզիկապես մատչելի և հարմարեցվող ծառայություններ,
- 19-րդ հոդվածի իրականացման ոչ բավարար մշտադիտարկում, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող կազմակերպությունների մասնակցության պակաս,
- ընդհանուր բյուջետային հատկացումների՝ հաշմանդամության առումով ոչ զգայուն լինելը,
- անբավարար ապակենտրոնացում, ինչը հանգեցնում է համայնքներում անկախ կյանք ունենալու անհավասար հնարավորությունների.

Ի՞նչ է նշանակում «անկախ կյանք»:

«Անկախ կյանք» նշանակում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն անհրաժեշտ բոլոր միջոցները՝ կայացնելու իրենց կյանքին վերաբերող բոլոր որոշումները, ունենալ ընտրություն և վերահսկողություն սեփական կյանքի նկատմամբ: Անձի ինքնուրույնությունը և ինքնորոշումը հիմնարար կարևորություն ունեն անկախ կյանքի համար, այդ թվում՝ տրանսպորտի, տեղեկատվության, հաղորդակցության և անձնական օգնության մատչելիությունը, բնակության վայրը, առօրյա կենցաղը, սովորությունները, արժանապատիվ աշխատանքը, անձնական հարաբերությունները, հագուստը, սնունդը, հիգիենան և առողջապահությունը, կրոնական միջոցառումները, մշակութային միջոցառումները և սեռական և վերարտադրողական իրավունքները:

Որտե՞ղ ենք մենք ապրում և ու՞մ հետ, ի՞նչ ենք ուտում, արդյոք սիրու՞մ ենք առավոտյան երկար քնել, թե՞ ուշ պառկել քնելու, ներսու՞մ լինել, թե՞ դրսում, սեղանին սփռոց փռե՞լ, մոմեր դնե՞լ, սիրելի կենդանիներ ունենա՞լ, ի՞նչ երաժշտություն լսել: Այս գործողություններն ու որոշումները ձևավորում են մեր ինքնությունն ու անհատականությունը:

Անկախ կյանքն անհատի ինքնուրույնության և ազատության էական մասն է և պարտադիր չէ, որ մենակ ապրել նշանակի: Բացի այդ, այն չպետք է մեկնաբանել բացառապես որպես կենցաղային գործողությունները միայնակ կատարելու ունակություն: Փոխարենը, այն հարկ է դիտարկել որպես ընտրություն և վերահսկողություն ունենալու ազատություն:

Ի՞նչ է նշանակում «ներառվել համայնքում»:

Համայնքում ներառվելու իրավունքը նշանակում է, որ հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր անձ պետք է հնարավորություն ունենա լիարժեք մասնակցելու և ներգրավվելու հասարակության մեջ: Սա ներառում է լիարժեք սոցիալական կյանք ունենալը և բոլորին հասանելի բոլոր ծառայություններից օգտվելու հնարավորությունը: Այն ընդգրկում է այնպիսի բաներ, ինչպիսիք են բնակարանը, տրանսպորտը, գնումները, կրթությունը, զբաղվածությունը, հանգիստը և ցանկացած այլ հանրային ծառայություններ, ներառյալ սոցիալական մեդիան: Այս իրավունքը նաև երաշխավորում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարող են մասնակցել համայնքային կյանքի բոլոր ասպեկտներին, օրինակ՝ մասնակցել հանրային հանդիպումներին, սպորտային միջոցառումներին, մշակութային և կրոնական միջոցառումներին և ցանկացած այլ գործունեության, որին նրանք ցանկանում են մասնակցել:

Ի՞նչ է «անկախ կենսապայման»:

Անկախ ապրել և համայնքում ներառվել նշանակում է ապրել ցանկացած տեսակի հաստատություններից դուրս: Խոսքը միայն կոնկրետ շենքում բնակվելու մասին չէ. դա անձնական ընտրության և ինքնավարության պահպանման մասին է: Սա նշանակում է խուսափել իրավիճակներից, երբ մեկ ուրիշը որոշակի կենսապայմաններ է պարտադրում հաշմանդամություն ունեցող անձին:

Որևէ բան չի կարող համարվել անկախ կենսապայման, եթե դա ունի ինստիտուցիոնալ տարրեր: Սա վերաբերում է բազմաթիվ բնակիչներով մեծ հաստատություններին, մի քանի անհատներով փոքր խմբային տներին կամ նույնիսկ առանձին տներին, եթե դրանք ունեն հաստատությունների կամ ինստիտուցիոնալացման բնորոշիչ հատկանիշներ:

Ինստիտուցիոնալ միջավայրերն ունեն ընդհանուր առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ օգնականների պարտադիր փոխանակումը տարբեր մարդկանց միջև, օգնության նկատմամբ սահմանափակ վերահսկողությունը, ընդհանուր համայնքից մեկուսացվածությունը, առօրյա կյանքում որոշումներ կայացնելու իրավունքի բացակայությունը, կենցաղային պայմանների սահմանափակ ընտրությունը, ռեժիմային առօրյան, իշխանական մոտեցումները, վերահսկումը և համատեղ ապրող հաշմանդամություն ունեցող անձանց թվի անհավասարակշռությունը:

Թեև որոշ ինստիտուցիոնալ միջավայրեր կարող են առաջարկել սահմանափակ ընտրություն և վերահսկողություն կոնկրետ հարցերում, նրանք միևնույն է մեկուսացնում են անհատներին լիարժեք ներառվել համայնքային կյանքին: Ապաինստիտուցիոնալացման քաղաքականությունը պետք է ներառի կառուցվածքային բարեփոխումներ, որոնք ավելին են, քան այն հաստատությունների փակումից: Երեխաների համար մեծ կամ փոքր խմբակային տները հատկապես ռիսկային են, քանի որ ընտանիքում մեծանալը չի կարող փոխարինվել որևէ այլ բանով: Նույնիսկ այսպես կոչված «ընտանիքին մոտ» հաստատությունները հաստատություններ են և չեն կարող փոխարինել ընտանիքի կողմից տրամադրվող խնամքին:

Ի՞նչ է «անձնական օգնությունը» կամ ո՞վ է «անձնական օգնականը»:

Անձնական օգնությունը վերաբերում է անհատականացված մարդկային աջակցությանը, որը հասանելի է հաշմանդամություն ունեցող անձին, որը հնարավորություն է տալիս նրան ապրել անկախ: Անձնական օգնությունը մյուս մարդկային աջակցության տեսակներից տարբերող հիմնական տարրերն են.

- Ֆինանսավորումը հարմարեցված է անհատի կարիքներին՝ հիմնված անհատականացված չափանիշների և մարդու իրավունքների չափանիշների վրա: Հաշմանդամություն ունեցող անձը վերահսկում է ֆինանսավորումը և հատկացնում այն պահանջվող օգնության համար: Բյուջեն չպետք է կրճատվի կամ հանգեցնի նրան, որ անձն ավելի բարձր անձնական վճարումներ անի:
- Հաշմանդամություն ունեցող անձը վերահսկում է ծառայությունը: Նրանք կարող են կամ պայմանագիր կնքել տարբեր կազմակերպությունների հետ, կամ իրենք հանդես գալ որպես գործատու: Նրանք ազատություն ունեն ձևավորելու ծառայությունը, որոշելու, թե ինչպես, երբ, որտեղ և ինչ ձևով է այն մատուցվում, և հրահանգներ տալ ծառայություններ մատուցողներին:
- Հաշմանդամություն ունեցող անձն է ընտրում անձնական օգնականին, վերապարտաստում և վերահսկում աշխատանքը: Օգնականը չի կարող ծառայություն մատուցել նաև այլ մարդու, եթե հաշմանդամություն ունեցող անձը համաձայն չէ:

- Հնարավոր է ծառայությունների մատուցման ինքնուրույն կառավարում: Անձինք պետք է կարողանան ընտրել օգնության իրենց վերահսկողության մակարդակը՝ ելնելով իրենց նախասիրություններից և կյանքի հանգամանքներից: Նույնիսկ եթե որոշակի պարտականություններ են կնքվում, հաշմանդամություն ունեցող անձը մնում է որոշումների առանցքում, և նրա նախասիրությունները պետք է հարգվեն: Անձնական օգնության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար անձը կարող է ստանալ որոշումների կայացման հարցում աջակցություն:
- Կոմիտեն նշում է, որ որոշ աջակցության ծառայություններ մատուցողներ չարաշահում են «անկախ կյանք» կամ «համայնքային կյանք» և «անձնական օգնություն» տերմինները՝ չբավարարելով 19-րդ հոդվածի պահանջները: Ծառայություններ, որոնք պարտադրում են «փաթեթային լուծումներ» կամ պահանջում են մարդկանց ապրել միասին կամ հատուկ պայմաններում չեն համապատասխանում 19-րդ հոդվածին: Անձնական օգնությունը պետք է լիարժեք ապահովի հաշմանդամություն ունեցող անձի՝ որոշում կայացնելու իրավունքը: Բացի այդ, հաղորդակցման բարդ պահանջներ ունեցող մարդիկ պետք է համապատասխան աջակցություն ստանան՝ արտահայտելու իրենց որոշումները, ընտրությունը և նախապատվությունները տարբեր միջոցներով, ներառյալ ոչ խոսքային հաղորդակցման մեթոդները, ինչպիսիք են դեմքի արտահայտությունը, մարմնի դիրքը և ձայնի բարձրացումը:

Որո՞նք են 19-րդ հոդվածի առանցքային տարրերը

Կոմիտեն թվարկում է 19-րդ հոդվածի առանցքային տարրերը՝ այդպես մասնակից բոլոր պետությունների համար նշելով անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքը իրականություն դարձնող նվազագույն պայմանները: Կոմիտեն նշում է, որ մասնակից պետությունները պետք է ապահովեն 19-րդ հոդվածի առանցքային տարրերի նկատմամբ մշտական հարգանքը, այդ թվում՝ երբ ֆինանսական կամ տնտեսական ճգնաժամ է: Առանցքային տարրերն են.

- ապահովել գործունակության իրավունքը Կոմիտեի՝ թիվ 1 ընդհանուր մեկնաբանությանը համահունչ, որպեսզի հաշմանդամություն ունեցող բոլոր անձինք, անկախ իրենց հաշմանդամության տեսակից, ունենան հնարավորություն՝ որոշելու, թե որտեղ, ում հետ և ինչպես ապրեն,
- ապահովել խտրականության բացառումը բնակարանային ապահովումից օգտվելու հարցում, այդ թվում՝ թե՛ եկամուտի, թե՛ ֆիզիկական մատչելիության առումով,
- մշակել համայնքում հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքին ուղղված գործողությունների կոնկրետ ծրագիր, այդ թվում՝ ձեռնարկելով քայլեր, որոնք ուղղված են համայնքում անկախ կյանքի համար ֆորմալ աջակցության ծառայությունների կազմակերպմանը, որպեսզի օրինակ՝ ընտանիքների կողմից տրամադրվող ոչ ֆորմալ աջակցությունը չլինի միակ տարբերակը,

- սահմանել և կիրառել կանոնակարգեր, քաղաքականություններ և մոնիտորինգի մեխանիզմներ՝ ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց հիմնական ծառայությունների, ներառյալ սոցիալական մեդիայի հավասար հասանելիությունը՝ կենտրոնանալով համընդհանուր դիզայնի սկզբունքների վրա հիմնված տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման և պաշտպանության վրա,
- մշակել կոնկրետ գործողությունների ծրագիր և քայլեր ձեռնարկել՝ տարրական, անհատականացված, չհամօգտագործվող և իրավունքահենք, հաշմանդամությանն ուղղված հատուկ աջակցության ծառայություններ և ծառայությունների այլ տեսակներ մշակելու և ներդնելու ուղղությամբ,
- ապահովել հետընթաց քայլերի բացառումը, եթե այդպիսի որևէ միջոց պատշաճ հիմնավորում չունի և չի համապատասխանում միջազգային իրավունքին,
- հետևողականորեն քանակական և որակական տվյալներ հավաքել հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ դեռևս հաստատություններում ապրողների մասին,
- օգտագործել ցանկացած հասանելի ֆինանսավորում, այդ թվում՝ տարածաշրջանային և զարգացման համագործակցության շրջանակներում առկա ֆինանսավորում՝ ներառական և մատչելի անկախ կյանքի ծառայություններ մշակելու համար.

Ինչպե՞ս է ընդհանուր մեկնաբանությունն ուրվագծում 19-րդ հոդվածի նորմատիվ բովանդակությունը:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն ընդգծում է, որ այս իրավունքները հարգելու պարտավորությունը պետություններից պահանջում է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ կանխելու համար պետության կամ մասնավոր սուբյեկտների կողմից խախտումները:

Պետությունները պետք է աշխատեն համայնքում անկախ ապրելու հետ կապված տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների առաջանցիկ իրականացման ուղղությամբ: Ապաինստիտուցիոնալացումը այս նպատակին հասնելու կարևորագույն կողմն է: Ռազմավարական պլանավորումը, խորհրդակցելով հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող կազմակերպությունների հետ, պետք է իրականացվի՝ ինստիտուցիոնալ միջավայրերը փոխարինելու անկախ կենսապահովման ծառայություններով:

Պետությունները պետք է անհապաղ վերացնեն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը և ապահովեն նրանց անկախ ապրելու և համայնքին մասնակցելու հավասար իրավունքը: Սա պահանջում է բարեփոխումներ քաղաքականության, օրենքների և պրակտիկայի մեջ, որոնք խոչընդոտում են իրենց բնակության վայրը ընտրելու, մատչելի բնակարաններ ձեռք բերելու և հիմնական հարմարություններն ու ծառայություններն օգտագործելու նրանց կարողությանը: Խելամիտ հարմարեցում ապահովելու պարտականությունը ենթակա է անմիջական իրականացման է և չի կարող իրականացվել աստիճանական մոտեցմամբ:

Պարտավորությունները կոմիտեն դասակարգել է երեք հիմնական խմբով՝

Հարգելու պարտավորություն

- Պետությունները պետք է ձեռնպահ մնան անհատի անկախ ապրելու և համայնքում ընդգրկվելու իրավունքին միջամտելուց:
- Նրանք չպետք է ընդունեն օրենքներ, որոնք սահմանափակում են հաշմանդամություն ունեցող անձանց ընտրությունը՝ կապված նրանց բնակության կամ ապրելու պայմանների հետ:
- Պետությունները պետք է աստիճանաբար դադարեցնեն ինստիտուցիոնալացումը, ձեռնպահ մնան նոր ինստիտուտներ կառուցելուց և չընդլայնեն գոյություն ունեցողները:

Պաշտպանության պարտավորություն

- Պետությունները պետք է թույլ չտան ընտանիքի անդամներին և երրորդ անձանց խաթարել համայնքում անկախ ապրելու իրավունքը:
- Նրանք չպետք է պետական կամ մասնավոր միջոցները ծախսեն հաստատությունների պահպանման վրա կամ «համայնքում ապրելու» անվան տակ նորերը ստեղծեն:
- Խտրական պրակտիկան պետք է արգելվի, իսկ ծառայությունների և կենսապայմանների մատչելիությունը պետք է ապահովվի:

Իրականացնելու պարտավորություն.

- Պետությունները պետք է տարբեր միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու անկախ ապրելու և համայնքում ընդգրկվելու իրավունքի լիարժեք իրացումը:
- Նրանք պետք է կառուցվածքային բարեփոխումներ իրականացնեն և համակարգված մոտեցում որդեգրեն ապաինստիտուցիոնալացման հարցում:
- Աջակցման ծառայությունները պետք է լինեն մատչելի, հասանելի և զգայուն՝ անհատական կարիքների տեսանկյունիսց, իսկ դրամական աջակցությունը կարող է նպաստել ներառմանը և հաղթահարել աղքատությունը:
- Պետությունները պետք է տրամադրեն ճշգրիտ տեղեկություններ, ուսուցում մասնագետների համար, արդարադատության հասանելիություն և աջակցության ծառայություններ ընտանիքի անդամներին, որոնք խնամում են հաշմանդամություն ունեցող անձանց:
- Պետք է պարբերաբար հարցումներ և տվյալների վերլուծություն իրականացվեն համայնքում անկախ ապրելու խոչընդոտների և պահանջների վերաբերյալ:

19-րդ հոդվածն ինչ կապեր ունի կոնվենցիայի մյուս հոդվածների հետ:

Անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքն ավելին է, քան մարդու այլ իրավունքների հանրագումարը. այն ընդգծում է համայնքում բոլոր իրավունքների իրացումը՝ անձնական զարգացման համար:

Կոմիտեն նշում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ներկայացնող կազմակերպությունների հետ խորհրդակցությունները և ակտիվ ներգրավվածությունը կարևոր նշանակություն ունեն անկախ կյանքի իրավունքի պլանավորման, իրականացման և մշտադիտարկման համար (հոդված 4(3)):

Խտրականության բացառումը էական նշանակություն ունի աջակցության ծառայություններից օգտվելու համար, և դրանցից օգտվելու համար նախատեսված չափանիշները պետք է լինեն օբյեկտիվ և կենտրոնացած անձի պահանջների վրա (հոդված 5):

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել գենդերային խտրականության և հայրիշխանական օրինաչափություններից ազատվելուն, որոնք ազդում են հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների վրա (հոդված 6):

Հաշմանդամություն ունեցող երեխաների և դեռահասների աջակցության ծառայությունները պետք է լինեն տարիքային առումով զգայուն և ներառական՝ հնարավորություն տալով նրանց ակտիվ մասնակցությանը և ընդգրկմանը համայնքային կյանքում (հոդված 7):

Իրազեկման բարձրացումը կենսական նշանակություն ունի կարծրատիպերն ու թյուր պատկերացումները արմատախիլ անելու, ներառական համայնքների և հաշմանդամություն ունեցող անձանց դրական պատկերացումները խթանելու համար (հոդված 8):

Մատչելիությունը (հոդված 9) կարևոր է անկախ կյանքի համար. միջավայրային խոչընդոտների վերացումը նախապայման է համայնքում լիարժեք ներառվածության համար:

Աջակցող ծառայությունները պետք է ներառվեն աղետների ռիսկի կառավարման մեջ՝ կանխելով հաշմանդամություն ունեցող անձանց անտեսումը արտակարգ իրավիճակների ժամանակ (հոդված 11):

Օրենքի առջև հավասար ճանաչումը (հոդված 12) հիմնարար է սեփական կյանքի նկատմամբ ընտրության և վերահսկողության իրականացման համար, և պետք է աջակցություն ցուցաբերվի՝ պաշտպանելու բոլորի գործունակությանը:

Արդարադատության մատչելիությունը (հոդված 13) ապահովում է պաշտպանության միջոցներ հաշմանդամություն ունեցող անձանց համար, ովքեր բախվում են աջակցության ծառայություններում անօրինական միջամտության կամ չարաշահման հետ:

Շարժունակության համար աջակցող տեխնոլոգիաները (հոդված 20) կարևոր են անկախ կյանքի համար՝ հնարավորություն տալով լիարժեք մասնակցություն ունենալ համայնքային կյանքին:

Տեղեկատվության և հաղորդակցության մատչելիությունը (հոդված 21) պետք է՝ ապահովելու համար, որ մարդիկ կայացնեն իրազեկ որոշումներ աջակցության ծառայությունների և կենսապայմանների վերաբերյալ:

Գաղտնիության և ընտանեկան կյանքի պաշտպանությունը (հոդված 22) պետք է ապահովվի օժանդակ ծառայությունների մատուցման ժամանակ:

Ընտանիքի իրավունքը (հոդված 23) չափազանց կարևոր է համայնքային կյանքի համար, աջակցելով ընտանիքներին հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները պաշտպանելու և ինստիտուցիոնալացումը կանխելու համար:

Ներառական կրթությունը (հոդված 24) կապված է անկախ կյանքի հետ՝ նպաստելով համայնքում ներառմանը:

Ընդհանուր առողջապահական ծառայությունները (հոդված 25) պետք է հասանելի և ընդունելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց իրենց համայնքներում, այդ թվում՝ հիվանդանոց ընդունվելու, վիրահատությունների և բժշկական խորհրդատվության ընթացքում:

Զբաղվածության աջակցության ծառայությունները (հոդված 27) օգնում են անցում կատարել բաց աշխատաշուկայում լիարժեք ներառմանը:

Բավարար կենսամակարդակը (հոդված 28) ներառում է աջակցող ծառայություններից օգտվելու հնարավորություն՝ ապահովելով աղքատության մեջ գտնվողների անկախությունը:

Քաղաքական և հասարակական կյանքին մասնակցությունը (հոդված 29) պահանջում է աջակցություն, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան օգտվել իրենց իրավունքներից, այդ թվում՝ ընտրել և ընտրվել:

Մշակութային կյանքն ու հանգիստը (հոդված 30) պետք է ներառական լինեն՝ տրամադրելով աջակցություն միջոցառումներին մասնակցելու համար:

Ապահովագրված տվյալները (հոդված 31) կարևոր նշանակություն ունեն ապահովագրման և աջակցության ծառայությունների առաջընթացի մշտադիտարկման համար:

Միջազգային համագործակցությունը (հոդված 32) պետք է ներառական լինի և ներդրումները պետք է ուղղվեն համայնքներում աջակցության ծառայություններին՝ հարգելով հաշմանդամություն ունեցող անձանց ընտրությունը և նպաստելով անկախ կյանքին:

Ի՞նչ պետք է անեն մասնակից պետությունները:

Կոմիտեն ընդունում է, որ մասնակից պետությունները կարող են ազգային մակարդակում բախվել մարտահրավերների՝ անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքն իրականացնելիս: Կոնվենցիայի 19-րդ հոդվածի լիարժեք իրականացումն ապահովելու համար մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն հետևյալ գործողությունները՝ ընդհանուր մեկնաբանությունում նշված նորմատիվ բովանդակությանը և պարտավորություններին համապատասխան.

- չեղյալ համարել բոլոր այն օրենքները, որոնք արգելում են հաշմանդամություն ունեցող որևէ անձի՝ անկախ հաշմանդամության տեսակից, ընտրել, թե որտեղ, ում հետ և ինչպես ապրել, ներառյալ հաշմանդամության հիմքով ազատազրկումից խուսափելու իրավունքը,
- ընդունել և կիրառել օրենքներ, չափորոշիչներ և այլ միջոցներ՝ տեղական համայնքները և միջավայրը, ինչպես նաև տեղեկատվությունը և հաղորդակցությունը հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար մատչելի դարձնելու նպատակով,
- ապահովել, որ սոցիալական պաշտպանության ծրագրերը բավարարեն հաշմանդամություն ունեցող անձանց բազմազան կարիքները մյուսների հետ հավասար հիմունքներով,
- քաղաքականությունում, օրենքներում, չափորոշիչներում և այլ միջոցառումներում, այդ թվում՝ պարտավորությունների իրականացման/իրագործման մշտադիտարկման մեջ ներդնել համընդհանուր դիզայնի սկզբունքը և՛ ֆիզիկական, և՛ վիրտուալ տարածքների համար. վերանայել շինարարական կանոնները՝ համոզվելու համար, որ դրանք համապատասխանում են համընդհանուր դիզայնի սկզբունքներին և շինարարական նորմերին,
- հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց տրամադրել համայնքում անկախ կյանքի համար անհրաժեշտ նյութական և դատավարական իրավունքները,

- հաշմանդամություն ունեցող անձանց իրենց հասկանալի եղանակով իրազեկել անկախ կյանքի և համայնքում ներառվելու իրավունքի մասին և իրականացնել վերապատրաստումներ՝ նպատակ ունենալով սատարել հաշմանդամություն ունեցող անձանց սեփական իրավունքների իրացման մասին տեղեկություններ ստանալուն,
- ընդունել ապաինստիտուցիոնալացման հստակ և թիրախային ռազմավարություններ՝ հստակ ժամկետներով և համապատասխան բյուջեներով՝ վերացնելու հաշմանդամություն ունեցող անձանց մեկուսացման, սեգրեգացիայի և ինստիտուցիոնալացման բոլոր ձևերը: Հարկ է հատուկ ուշադրություն դարձնել ներկայումս հաստատություններում գտնվող հոգեսոցիալական և (կամ) մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց և հաշմանդամություն ունեցող երեխաներին,
- ներդնել իրազեկման ծրագրեր, որոնք ուղղված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բացասական վերաբերմունքին և նրանց մասին կարծրատիպերին և կապահովեն համայնքի վերափոխումը՝ ձգտելով առաջ բերել անհատականացված և մատչելի ընդհանուր ծառայություններ,
- ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց կազմակերպությունների մասնակցությունը աջակցության ծառայությունների և համայնքների փոխակերպման և ապաինստիտուցիոնալացման ռազմավարությունների մշակման և իրականացման գործում,
- մշակել համապարփակ ռազմավարություններ և ուղեցույցներ և հատկացնել ֆինանսական ռեսուրսներ ֆինանսապես և ֆիզիկապես մատչելի բնակարանների կառուցման, հանրային տարածքների և տրանսպորտի համար, դրանց իրականացման համար պատշաճ ժամկետներով և այնպիսի պատժամիջոցներով, որոնք արդյունավետ են, կանխում են պետական և մասնավոր դերակատարների կողմից խախտումները,
- ռեսուրսներ հատկացնել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց կողմից ղեկավարվող աջակցության ծառայությունների ձևավորման, օրինակ՝ անձնական օգնության, ուղեկցորդների, ընթերցողների և մասնագիտական ուսուցում անցած ժեստերի լեզվի և այլ թարգմանիչների համար,
- ձևավորվել մրցութային գործընթացներ՝ համայնքում անկախ կյանք վարող հաշմանդամություն ունեցող անձանց համար աջակցության ծառայությունների մատուցման համար,
- ստեղծել մեխանիզմներ՝ մշտադիտարկելու գոյություն ունեցող հաստատությունները և գիշերօթիկ ծառայությունները, ապաինստիտուցիոնալացման ռազմավարությունները և համայնքում անկախ կյանքի ներդրումը՝ չմոռանալով անկախ մշտադիտարկման շրջանակների դերը,
- իրականացնել 19-րդ հոդվածով նախատեսված մշտադիտարկումն ու իրականացումը հաշմանդամություն ունեցող անձանց հետ լիարժեք խորհրդակցությամբ և նրանց մասնակցությամբ՝ նրանց ներկայացուցնող կազմակերպությունների միջոցով.

EUROPEAN UNION FOR ARMENIA

Coalition for Inclusive
Legal Reforms

"AGATE"

ԴԵՊԻ ԼԵՐԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ
TOWARDS INCLUSIVE
ARMENIA